և ուղղած են, ամենից առաջ, պատերազմին աջակցող ուժերի, և կազմակերպությունների դէմ։

Նման դէպքերը յուզում էին հանրային միտքն ու կառավարական շրջանները։ Տարածւում էին հազար տեսակ լուրեր, որ, իբր թէ, Կովկասի թուրքերը չտապով զինւում են, որ նրանք պատրաստւում են միանալու թիւրքերին, որ թիւրքերն արդէն որոշել են գրաւել Կովկասը և այլն և այլն։ Իշխանութիւնը անզօր էր իրական դարման հասցնելու։ Նա, աւելի շուտ, աշխատում էր ծեփել աւելի ու աւելի բացւող ճեղքը կամ չտեսնել ձեւանալ օրը ցերեկով կատարւող դէպքերը։

Ապրիլ 24-ին, Անդրկ. Առանձին Կոմիտէն քննեց թուրքերի զինման լուրերը և լսելով թուրք ներկայացուցիչներին՝ եկաւ այն եզրակացութեան, որ դրանք անհիմն բաներ են ու որոշեց այդ մասին հաղորդել հասարակութեան։ Որոշեց նաև ռուս-հայ-վրացի-թուրք խառն պատւիրակութիւններ ուղարկել այն վայրերը, ուր տեղի կունենան միջազգային խռովութիւններ։ Բացի այդ, կարգադրեց արդելել քաղաքացիներին զինւորական զէնք կրել։

Նոյն հարցը, քիչ յետոյ, մայիս 12-ին, քննւեց և Առանձին Կոմիտէին կից գործող խորհրդակցութեան և զինւորական ու բանւորական խորհուրդների պատգամաւորների խառն նիստում, Խարլամովի նախագահութեամբ։ Այս վերջինը հաղորդեց, որ զանազան վայրերից յուզումնալից լուրեր են հասնում ազգաբնակութեան զինւելու մասին և որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել երկիրը միջազգային կռիւների սպառնալիքից փրկելու համար։ Խորհրդակցութիւնը, այս անգամ, հաստատեց զինման փաստը և որոշեց՝ 1) հրատարակել ռուսերէն և տեղական լեզուներով կոչեր՝ բացատրելով ժողովրդին զինման վնասակարութիւնը, 2) շրջաններն ուղարկել պատգամաւորներ և պրովոկացիայի առաջն առնել. 3) հրատարակել օրէնք՝ զէնք կրելու իրաւունքի մասին. 4) հիմնել հաշտարար մարմիններ՝ հասարակութեան մէջ առաջ եկող թիւրիմացութիւնները վերացնելու համար. 5) արգելել ինքնակամ խուզարկութիւնները, 6) պատժել սուտ լուրեր տարածողներին, 7) հիմնել յատուկ մարմին ազգային հողի վրա ծագող վէճերը քննելու համար։

Նշանակում է պաշտօնապէս հաստատւում էր, որ թուրքերը զինւում են։ Հաստատւում էր նաև, որ արգելւած միջոցներով պետական զէնք են ձեռք բերում ու փոխադրում. այդ նպատակով յարձակումներ են կատարում պետական պահեստների ու կայանների վրա։ Նման մատնանշումները սաստիկ վրդովում էին մահմետականներին։ Նրանք պնդում էին, որ այստեղ գործում է հայկական պրովոկացիան։ Կատարւող խռովութիւններն ու հակապետական շարժումները բարդում էին հայերի, մանաւանդ, թիւրքահայ գաղթականների վրա։

Այսպէս, Բագւի Մահմետական կոմիտէն, մայիսին, հեռագրեց Մոսկւա, համառուսական մահմետական համագումարին, թէ՝ «Վերջերս Բագւում, Կարսում, Երևանում և Կովկասի այլ քաղաքներում եռանդուն պրովոկացիա է արւում մահմետականների դէմ և գրոյցներ տարածւում,